Երևան Գարնանային վազքի կանոնակարգ

Ապրիլի 28, 2019 Երևան, Հայաստան

1. Կազմակերպիչներ:

- «Արմ Մարաթոն» մարզակրթական հիմնադրամ
- Երևանի քաղաքապետարան,
- Tri-Club Yerevan սպորտային ակումբ

2. Վազքուղի, մեկնարկ, ավարտ

- Մեկնարկի օր և ժամ՝Ապրիլի 28, 2019, 8:00
- Մեկնարկի վայր՝ Հրազդանի կիրճ, Երևան, Հայաստան:
- Ավարտի և մեկնարկի վայրերը համընկնում են:
- Սահմանված մրցատարածություններ՝ 10կմ, 5կմ,4*2,5կմ էստաֆետային վազք և 1 կմ մանկական վազք:
- Վազքատարածքի հաղթահարման սահմանված ժամանակ՝ 1 ժամ 30 րոպե:

3. Միջոցառման ժամակացույց՝

Ապրիլի 27, 2019 – EXPO, մեկնարկային փաթեթների տրամադրում

Վայր: կհայտարարվի ավելի ուշ

11:00–19:00 — EXPO բացում: գրանցված մասնակիցների մեկնարկային փաթեթների տրամադրում

Ապրիլի 28, 2019 – Միջոցառման օր

9:00 — Մեկնարկային հատվածի բացում ; պահասենյակների բացում

9:30 – 9:45 —Նախավարժանք

10:00 —Մանկական վազքի մեկնարկ

10:30 – 5կմ վազքի մեկնարկ

11:30 – 10կմ և 4*2,5կմ էստաֆետային վազքի մեկնարկ

13:00 — Վազքի ավարտ

13:00 — Մրցանակաբաշխություն

13:30 — Մեկնարկային հատվածի փակում

4. Մասնակիցներ

- Երևան Գարնանային վազքին կարող են մասնակցել.
    - 10 կմ՝ 16 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
    - 5 կմ և էստաֆետային վազք՝ 13 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
    - 1 կմ՝ երեխաներ՝ 3-12 տարեկան, 7 տարեկանից փոքր երեխաները պետք է վազեն ծնողի ուղեկցությամբ
- Վազքի մասնակցության և տարիքային խմբերում ընդգրկվելու համար մասնակցի տարիքը որոշվում է 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- Մեկնարկային փաթեթները ստանալիս ՝ մասնակիցը ստորագրում է համաձայնագիր, ըստ որի կազմակերպիչներն ամբողջովին զերծ են մնում միջոցառման (մրցավազքի) ժամանակ մասնակցի առողջությանը հասցված հնարավոր վնասի պատասխանատվությունից: Անչափահաս երեխաների մասնակցության համար դիմումը ստորագրում է ծնողներից մեկը:
- Մասնակիցների քանակը սահմանափակ է՝ մինչև 1000 հոգի:

5. Գրանցում

- Մրցույթի համար կարելի է գրանցվել www.armeniamarathon.org կայքով կամ EasyPay տերմինալների միջոցով: EXPO-ի ժամանակ հնարավոր է գրանցվել, եթե լինեն ազատ տեղեր: Վճարումը կարելի է կատարել առցանց Visa կամ MasterCard քարտերով: Մասնակցության վճարումը հնարավոր է իրականացնել կանխիկով EasyPay տերմինալներով (երբ ծառայությունը դառնա հասանելի) և EXPO-ի ժամանակ:
- Գրանցումն ավարտվում է ապրիլի 25, 2019 կամ ավելի շուտ, եթե հնարավոր մասնակիցների թիվն արդեն լրացել է:
- Գրանցումը համարվում է ավարտված, երբ լրացվել է գրանցման առցանց կամ թղթային հայտը և իրականացվել է համապատասխան վճարում:
- Գարնանային վազքից գոյացած շահույթը և հավելյալ բարեգործական նվիրատվություններն ամբողջությամբ տրամադրվելու են «Հայ Մայրեր» ՀԿ-ին:

- Մասնակցության վճարները հետևյալն են՝

Մրցատարածություն	Մինչև ապրիլի 1	Ապրիլի 1 - ապրիլի 26	Expo
Մանկական 1կմ	3000	4 000	5000
5կմ	4500	5 000	6000
10կմ	7500	8 000	9000
Խմբային վազք	14000	16 000	18000

- Մասնակցության վճարը չի ներառում շապիկը: Մրցութային վերնաշապիկներ կարելի է գնել գրանցման ժամանակ 3000 դրամ հավելյալ վճարով:

6. Գրանցման գործընթացը

- Մասնակիցը առցանց www.armeniamarathon.org էջում լրացնում է մասնակցության հայտը և այնուհետև կատարում առցանց վճարում կամ կանխիկ բանկային մասնաճյուղում:
- Հայտը լրացնելուց հետո մասնակիցը էլ.փոստով ստանում է հայտի հաստատումը:
- Վճարումը հաստատելուց հետո մարզիկը ներառվում է մասնակիցների ցուցակի մեջ:

7. Մեկնարկային համարների տրամադրում

- Մեկնարկային համարները տրամադրվելու են ապրիլի 26-ին և ապրիլի 27-ին:
- Վճարման գումարի դիմաց մասնակցին տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝ մեկնարկային համար, ժամանակաչափ, ավարտի մեդալ, ջրի կայաններից օգտվելու հնարավորություն, էլեկտրոնային վկայական, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն ստանալու հնարավորություն:
- Ոչ կազմակերպիչների մեղքով մրցությունը չկայանալու դեպքում մասնակցության վճարը չի վերադարձվում:
- Մասնակցության վճարը վերադարձի ենթակա չէ:

8. Մեկնարկային փաթեթների տրամադրում

- Մեկնարկային փաթեթները տրամադրվելու են 2019թ ապրիլի 27-ին: Փաթեթը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

9. Առաջին բուժօգնություն

- Առաջին օգնություն հասանելի է մեկնարկ / ավարտ հատվածում: Մեկնարկային հատվածում հերթապահում են բուժաշխատակիցներ: Վազքուղում վտանգված մարդ տեսնելիս անհապաղ պետք է հաղորդել բուժաշխատողներին կամ կազմակերպիչներին:

10. Որակազրկում

- Վազքի կազմակերպիչները կարող են որակազրկել այն մասնակիցներին, որոնք խախտում են մրցության կանոնները, խանգարում մնացած մասնակիցներին, այլ կերպ խաթարում մրցության ընթացքը:

11. Ժամանակաչափ

- Մասնակիցների վազքի արդյունքների ճշգրիտ չափումը իրականացվում միջազգային մակարդակի ժամանակաչափ համակարգի օգնությամբ: Յուրաքանչյուր մասնակցի տրվում է անհատական չիփ: Վազքատարածքն անցնելուց հետո, բոլոր մասնակիցների համար որոշվում է իրենց զուտ (մեկնարկային կետից մինչև ավարտի կետը հատելու) ժամանակը: Վազքի ավարտին յուրաքանչյուր չիփ պետք է վերադարձվի: Կորցրած կամ չվերադարձված չիփի դեպքում նախատեսվում է տույժ՝ 20000 դրամի չափով:

12. Պարգևատրություն

- Եզրագծին հասած բոլոր մասնակիցները ստանում են մասնակցի մեդալներ:
- Բացարձակ առաջնությունում հաղթող երեք մասնակիցները կանանց և տղամարդկանց մեջ որոշվում են եզրագիծը հատելու փաստի հիման վրա (gun time), վազքուղու վրա ժամանակաչափի օգնությամբ գրանցվող բոլոր կետերը անցնելու դեպքում: Նրանց կտրվեն մրցանականեր վազքի հովանավորների կողմից:
- Հաղթանակածների մրցանակաբաշխությանը չներկայանալու դեպքում կազմակերպիչները կարող են ինքնուրույն տնօրինել պարգևները:

13. Լուսանկարում

- Կազմակերպիչները կարող են օգտագործել մրցավազքի ժամանակ արված լուսանկարները՝ ըստ իրենց հայեցողության:

14. Բողոքարկումներ

- Մրցավազքի արդյունքների շուրջ բոլոր բողոքարկումները, վազքատարածքում կատարված բոլոր խախտումները գրավոր տեսքով ներկայացվում են մրցավազքի գլխավոր դատավորին, կամ ուղարկվում **info@armeniamarathon.org** էլ. հասցեով մինչև 2019 թ մայիսի 1-ը:

15. Առողջական վիճակի վերաբերյալ հարցեր

- Մասնակիցները ստորագրում են համաձայնագիր, ըստ որի կազմակերպիչներն ամբողջապես զերծ են մնում մրցավազքի ժամանակ մասնակցի առողջությանը հասցված հնարավոր վնասի պատասխանատվությունից:

16. Անձնական տվյալների օգտագործում

- Լրացնելով գրանցման հայտը և սեղմելով «Գրանցում» կոճակը վազորդը համաձայնվում է տրամադրել անձնական տվյալները վազքի կազմակերպիչներին: Վերջիններս կարող են այդ տվյալները կիրառել մասնակիցների ցանկի կազմման, մրցույթի հաղթողների արձագրության և տվյալների ընդհանրացված վիճակագրության ներկայացման համար:
- Անձնական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին այն պարագայում, երբ վերջինս ունի համապատասխան պայմանագիր «Արմ Մարաթոն» հիմնադրամի հետ և պարտավորվում է պահպանել տվյալների գաղտնիությունը: Երրորդ կողմի ներկայացուցիչները կարող են կիրառել անձնական տվյալները հետևյալ դեպքերում՝ Երևան Մարաթոնի կամ այլ մրցույթների մասին տեղեկատվական էլ. նամակներ և sms հաղորդագրություններ ուղարկելու, վերջնական արձանագրության և ժամանակաչափ սարքերի գործառման. ընդհանրացված վիճակագրության համար: Այս պարագայում կարող են օգտագործվել հետևյալ տիպի անձնական տվյալներ՝ անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ, երկիր, սեռ, հեռախոսահամար, էլ. հասցե, մրցույթի արդյունք: Վազքի ավարտին ներկայացվող հանրայնացվող արձանագրությունը պարունակելու է մասնակցի անունը, ազգանունը, երկիրը, սեռը, ծննդյան տարեթիվն ու մրցույթի արդյունքը: